<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ
0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1,
հեռ. (+374 10) 510-910, 8686,
էլ. փոստ bank@aeb.am

Հաստատված է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Վարչության 05.08.2025թ/ թիվ 147/03 որոշման Հավելված 1-ով

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Visa վճարային քարտերով անկանխիկ գործարքների կատարման մարքեթինգային մրցույթի անցկացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմաններով սահմանվում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից Բանկի Visa վճարային քարտով անկանխիկ գործարքների կատարման մարքեթինգային մրցույթ (այսուհետ՝ «Մրցույթ») անցկացնելու կանոններն ու պայմանները (այսուհետ՝ Մրցույթի պայմաններ):

1.2. Մրցույթին մասնակցելով՝ մասնակիցն ամբողջությամբ ընդունում է և անվերապահ համաձայնվում է Մրցույթի պայմաններին:

1.3. Մրցույթի անցկացումը մարքեթինգային (գովազդային) միջոցառում է:

2. Մրցույթի ժամկետներ

2.1. Մրցույթի անցկացման ժամկետն սկսվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ի ժամը 00:01-ից և ավարտվում է 2025 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 23:59: Պայմաններում ժամերը նշվում են Երևանի ժամանակով:

2.2. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են Մրցույթի անցկացման ժամկետի ավարտից հետո մինչև 2025 թվականի դեկտեմբերի 12-ը ներառյալ:

2.3. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի անհատական կոդը հրապարակվելու է Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 16-ի ժամը 23:59-ը:

2.4. Մրցույթի հաղթողին մրցանակը հանձնվելու է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:

3. Մրցույթի մասնակիցներ

3.1 Մրցույթի մասնակիցներ են համարվում Բանկի Visa վճարային քարտի, այսուհետ՝ Քարտ, քարտապան հանդիսացող, 18 տարին լրացած և Բանկի աշխատակից չհանդիսացող այն քարտապանները (այսուհետ՝ Քարտապան), ովքեր Մրցույթի անցկացման ժամկետում Քարտով կատարում են Պայմանների 4-րդ մասով սահմանված չափով և պայմաններով անկանխիկ գործարքներ:

4. Մրցույթի կանոններ և պայմաններ

4.1. Մրցույթի մասնակցելու համար Քարտապանը Մրցույթի անցկացման ժամկետում պետք է Քարտով կատարի անկանխիկ գործարք(ներ)՝ 50,000 դրամ կամ դրան

համարժեք արտարժույթի գումարի չափով, այսուհետ՝ Գործարք, բացառությամբ այն անկանխիկ գործարքների, որոնց նկատմամբ չեն տարածվում Մրցույթի պայմանները:

4.2. Մրցույթի պայմանները չեն տարածվում հետևյալ տեսակի գործարքների նկատմամբ.

- Քարտին անկանխիկ մուտք,
- Քարտից փոխանցում այլ քարտի կամ այլ հաշվի,
- Քարտից կոմունալ վճարում (ներառյալ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարում),
- Հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրում,
- Վարկի մարումներ, տոկոսների, տույժերի և այլ վճարների վճարումներ ,
- Խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումներ,
- պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարումներ,
- պետական տուրքերի վճարումներ,
- հարկերի վճարումներ,
- Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնություններ,
- օրենքով սահմանված կարգով պարտադրված ցանկացած վճարումներ,
- լրացուցիչ և կից քարտերով կատարված գործարքներ:

4.3. Գործարքի դեպքում ձևավորվում է Մրցույթին մասնակցող մեկ կոդ և ուղարկվում է տվյալ Քարտապանի՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ գրանցված էլ. փոստ չունենալու դեպքում՝ Բանկում գրանցված նրա հեռախոսահամարին մինչև Մրցույթի անցկացման ժամկետի ավարտը: Կախված Գործարքի քանակից նույն Քարտապանին ուղարկվում է կատարված Գործարքի քանակին համապատասխան քանակի կոդ:

4.4. Արտարժույթով քարտի և/կամ գործարքի դեպքում հաշվարկները կատարվում են հետևյալ սկզբունքով.

4.4.1. Քարտային հաշվի և գործարքի արժույթը նույնը լինելու դեպքում՝ դրամով արտահայտված արժեքը հաշվարկվում է Գործարքի Բանկում ձևակերպման պահին ՀՀ ԿԲ կողմից սահմանված համապատասխան արտարժույթի փոխարժեքով:

4.4.2. Քարտային հաշվի և գործարքի արժույթները տարբերվելու դեպքում՝ դրամով արտահայտված արժեքը հաշվարկվում է Բանկում գործարքի ձևակերպման պահին քարտային գործառնությունների համար Բանկի սահմանած փոխարժեքով:

4.5. Մրցույթի պայմանները չեն տարածվում այն գործարքի նկատմամբ, որի գծով կատարվել է գործարքի հետվերադարձ:

4.6. Մրցույթին հաղթող մասնակցին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի տրվում և մրցանակը չի փոխարինվում այլ նվերով:

4.7. POS տերմինալների և EPOS-տերմինալների խափանման (այդ թվում՝ կապի), անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված գործարքի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.8. Մասնակցի կողմից Բանկին սխալ/թերի տվյալներ տրամադրած լինելու, Մրցույթի պայմանները խախտելու և (կամ) զեղծարարարություն և (կամ) իրավունքի չարաշահում թույլ տալու դեպքում՝ տվյալ Քարտապանը դադարում է համարվել Մրցույթի մասնակից:

4.9. Մրցույթի ամփոփումը իրականացվելու է առցանց՝ Բանկի սոց.կայքերի միջոցով:

4.10. Մրցույթի հաղթողը ճանաչվում է Մասնակիցներից պատահականության սկզբունքով՝ Քարտապաններին տրամադրված կոդերից պատահական ընտրության միջոցով:

4.11. Հաղթող Քարտապանի հաղթող ճանաչվելու, Մրցանակը ստանալու և ամփոփիչ միջոցառման անցկացման վայրի ու ժամանակի մասին Բանկը ուղարկում է տեղեկացում Բանկում գրանցված նրա էլեկտրոնային փոստի հասցեին և Բանկում գրանցված նրա բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագություն:

4.12. Մրցույթի հաղթողի անունը/նկարը Բանկը կարող է իր կայքում և (կամ) սոցիալական կայքերի պաշտոնական էջերում հրապարակել, որի համար Մասնակիցն իր մասնակցությամբ տալիս է համաձայնություն:

4.13. Մրցույթի հաղթող մասնակցի կողմից Մրցույթի պայմանները խախտելու և (կամ) զեղծարարարություն և (կամ) իրավունքի չարաշահում թույլ տալու, Մրցույթի ամփոփումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում Բանկի կողմից հաղթողի հետ կապ հաստատելու հնարավոր չլինելու դեպքում (Քարտապանի չպատասխանելու, անհասանելի լինելու) Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու, հաղթողի կողմից մրցանակը ստանալուց հրաժարվելու դեպքում՝ հաղթող մասնակցի Մրցույթի հաղթող ճանաչվելը դադարում է և Բանկն իրավունք ունի հրաժարվել Մրցանակի տրամադրումից:

4. Մրցույթում հաղթող մասնակցի մրցանակը և դրա հանձնումը հաղթողին

4.1. Մրցույթի հաղթողին տրվում է հետևյալ մրցանակը, այսուհետ՝ Մրցանակ.

- **1 հատ BYD YUAN UP MY2024 (Leading Edition) էլեկտրական մեքենա**

4.2. Մրցույթի հաղթողին Մրցանակը տրամադրելու համար վերջինս պետք է անձը հաստատող փաստաթղթով ներկայանա Բանկի Գլխամասային գրասենյակ և կատարի Մրցանակի նկատմամբ հաղթող մասնակցի իրավունքների ձևակերման և պետական գրանցման համար անհրաժեշտ գործողությունները, ծախսերը և ստանա մրցանակը: Սույն կետով սահմանված գործողությունները, մրցույթի ամփոփիչ միջոցառման մասնակցելը կարող է իրականացնել հաղթող մասնակցի կողմից լիազորված անձը, եթե վերջինս անձը հաստատող փաստաթղթով ներկայանում է Բանկ և ներկայացնում է հաղթող մասնակցի կողմնից նոտարական կարգով իրեն տրված և համապատասխան գործողություններ կատարելու լիազորություններնններ պարունակող լիազորագիրը:

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ
0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1,
հեռ. (+374 10) 510-910, 8686,
էլ. փոստ bank@aeb.am

4.3. Մրցույթի հաղթողը պետք է Բանկին ներկայացնի իր այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ կլինեն Բանկի կողմից հաղթողին մրցանակը տրամադրելու, մրցանակի նկատմամբ նրա իրավունքների ձևակերպման և պետական գրանցման, ինչպես նաև մարքեթինգային նպատակներով օգտագործվելու համար:

5. Հաղորդակցման տվյալներ

5.1. Բանկի հաղորդակցման տվյալներն են՝

Բանկի համացանցային պաշտոնական կայք-էջը՝ https://www.aeb.am
Բանկի հեռախոսահամարը՝ 86 86
Բանկի սոցիալական առցանց էջերը՝ Facebook, Instagram, Telegram